ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

N 5-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ԹԻՎ 13-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի 2024 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 13-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 29-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«1) Գլխավոր վարչության համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով

սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերի (բացառությամբ անչափահասների վերաբերյալ, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով), ինչպես նաև Գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության վարչության կողմից ընդունված վարչական ակտերի, գործողության, անգործության դեմ ներկայացված հայցերով դատական ներկայացուցչության ապահովումը, ինչպես նաև վերը նշված ակտերի հիման վրա ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքից բաժնեմաս առանձնացնելու պահանջներով դատարան հայցադիմումներ ներկայացնելը և դատական ներկայացուցչության ապահովումը, սնանկության դատարան դիմումներ, հայցադիմումներ ներկայացնելը և դատական ներկայացուցչության ապահովումը.»,

բ. 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) 30-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«1) Գլխավոր վարչության համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերի (բացառությամբ անչափահասների վերաբերյալ, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով), ինչպես նաև Գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության վարչության կողմից ընդունված վարչական ակտերի, գործողության, անգործության դեմ բերված վարչական բողոքներով բողոքարկման վարույթների իրականացումը.».

3) 31-րդ կետի 3-րդ ենթակետում «հսկողության» բառը փոխարինել «վերահսկողության» բառով.

4) 43-րդ կետի 23-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝

«23) Գլխավոր վարչության համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով կայացված վարչական ակտերը (բացառությամբ անչափահասների վերաբերյալ, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով), ինչպես նաև Գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության վարչության կողմից ընդունված վարչական ակտերը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկվելու դեպքերում այն քննելու իրավասություն ունեցող վերադաս

պաշտոնատար անձ է հանդիսանում Ոստիկանության պետի տեղակալը կամ վարչական գործունեության և բողոքների քննության վարչության պետը, իսկ վերջինիս բացակայության դեպքում վարչական բողոքների քննության բաժնի գործունեության ոլորտը համակարգող վարչության պետի տեղակալը.»:

2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«11» 04. 2025թ.

ք. Երևան